ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/37587-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի 4 րդ մասի՝ նոտարները, անհատ ձեռնարկատերերը, ինքնազբաղված անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք, ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են սոցիալական վճարները՝ տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Օրենքի նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել նշված մասում և սահմանել, որ «Նոտարները, անհատ ձեռնարկատերերն ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում և փոխանցում են սոցիալական վճարները տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ ինքնազբաղված անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:»:

Նշված փոփոխության վերաբերյալ հայտնում ենք, որ ինչպես անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից շահութահարկի, այնպես էլ՝ ինքնազբաղված անձանց կողմից եկամտային հարկի տարեկան վճարման ժամկետը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ: Այսինքն՝ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով անհատ ձեռնարկատերերի, նոտարների և ինքնազբաղված անձանց համար ընդամենը սահմանված է սոցիալական վճարների վճարման տարեկան ժամկետ՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ հայտնում ենք, որ անհատ ձեռնարկատերերի և նոտարների՝ շահութահարկ վճարող հանդիսանալու հետ կապված օրենքի՝ փոփոխություն նախատեսող հոդվածի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի նորմերի

միջև հակասություն առկա չէ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկա փուլում ձեռնպահ մնալ օրենքի նախագծի քննարկումից և օրենքի նախագծով առաջարկվող տեխնիկական բնույթի փոփոխությանն անդրադառնալ առաջիկայում սպասվող օրենսդրական փոփոխությունների շրջանակում:

20 օգոստոսի 2019 թվականի N 1153 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 20
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-215-03.07.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի օրենքի այսուհետ (օրենքի) 7-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր բովանդակությամբ.

«Նոտարները եւ անհատ ձեռնարկատերերը ստացման ենթակա եկամուտներից ինքնուրույն հաշվարկում եւ փոխանցում են սոցիալական վճարները տարեկան կտրվածքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետներում, իսկ ինքնազբաղված անձինք, ինչպես նաեւ վարձու աշխատողները, որպես ինքնազբաղված անձինք՝ եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետներում:

Եթե գործատուն ազատված է հարկային գործակալի պարտականություններից, ապա վարձու աշխատողը սոցիալական վճարը հաշվարկում եւ փոխանցում է ինքնուրույն՝ գործատուի համար սահմանված ժամկետներում»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ՕՐԵՆՔԸ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ «ՀՀ Հարկային օրենսգրքում» տարեկան կտրվածքով եկամտային հարկ այլեւս չի վճարվում նոտարների եւ անհատ ձեռնարկատերերի կողմից եւ դրա փոխարեն վճարվում է տարեկան կտրվածքով շահութահարկ, հետեւաբար նոտարները եւ անհատ ձեռնարկատերերը պետք է սոցիալական վճարը հաշվարկեն եւ փոխանցեն ոչ թե եկամտային հարկի վճարման համար սահմանված ժամկետում, այլ շահութահարկի վճարման համար սահմանված ժամկետում:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

«ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքով առաջարկվող փոփոխությունների պատճառն է.

Առկա օրենսդրական լուծման միջոցով այն տեխնիկական բացթողնման վերացումը, որի հետեւանքով առկա է հակասություն «ՀՀ հարկային օրենսգրքով» սահմանվող նորմերի եւ այս օրենքի միջեւ:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է «ՀՀ օրենքը կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում կատարել փոփոխություն, որպեսզի չլինի հակասություն «ՀՀ հարկային օրենսգրքի» հետ:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա օրենսդրական վերը ներկայացված կարգավորման միջոցով վերացնել հակասությունը, որը առկա է սույն օրենքում եւ «ՀՀ հարկային օրենսգրքում»: